

Հավելված
Հաշվեքննիչ պալատի
2020թ. դեկտեմբերի 25-ի թիվ 237-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



ԸՆԹԱՅԻԿ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՑ
ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. Ներածական մաս - էջ 2
2. Հապավումներ - էջ 4
3. Ամփոփագիր - էջ 5
4. Հաշվեքննության օբյեկտի ֆինանսական ցուցանիշներ - էջ 12
5. Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումներ - էջ 16
6. Հաշվեքննությամբ արձանագրված այլ փաստեր - էջ 18
7. Հետհսկողական գործընթաց - էջ 24
8. Առաջարկություններ - էջ 31
9. Հավելվածներ և այլ տեղեկատվություն - էջ 33

1. Ն Ե Ր Ա Ծ Ա Կ Ա Ն Մ Ա Ս

Հաշվեքննության հիմքը

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի օգոստոսի 4-ի թիվ 144-Ա, 2020 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 168-Ա և 2020 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 171-Ա որոշումներ:

Հաշվեքննության օբյեկտը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:

Հաշվեքննության առարկան

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 2020 թվականի պետական բյուջեի վեց ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:

Հաշվեքննության առարկայի չափանիշները

«Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենք, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, «Գնումների մասին» ՀՀ օրենք, «Հավապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը, ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 1919-Ն որոշում, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168 –Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 526-Ն որոշում, ՀՀ վարչապետի 2019 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 1984-Ա որոշում, ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 31-ի «ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի թիվ 1262-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 1503-Ն որոշում, ՀՀ կառավարության 2013 թվականի նոյեմբերի 28-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» «ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և (կամ) միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տրամադրելու կարգը

հաստատելու և ՀՀ կառավարության 2007 թվականի մարտի 1-ի թիվ 297 –Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1330-Ն որոշում, ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու կարգը հաստատելու, նՀՀ կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 8-ի թիվ 1986 –Ն և 2005 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 2114 –Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1183-Ն որոշում և այլն:

**Հաշվեքննությունն
ընդգրկող
ժամանակաշրջանը**

2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի հունիսի 30-ը ներառյալ:

**Հաշվեքննության
կատարման
ժամկետը**

2020 թվականի օգոստոսի 17-ից մինչև 2020 թվականի սեպտեմբերի 30-ը, 2020 թվականի նոյեմբերի 20-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 21-ը:

**Հաշվեքննության
մեթոդաբանությունը**

Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանությունների, Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության «ISSAI 100 – Հանրային հատվածի աուդիտի հիմնարար սկզբունքները», «ISSAI 200 – Ֆինանսական աուդիտի հիմնարար սկզբունքները», «ISSAI 400 – Համապատասխանության աուդիտի իրականացման հիմնարար սկզբունքները» ստանդարտների համաձայն: Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ, վերակատարում ընթացակարգերը:

**Հաշվեքննությունն
իրականացրած
կառուցվածքային
ստորաբաժանում**

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի չորրորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Արթուր Բախչագույանը:

2. Հ Ա Պ Ա Վ ՈՒ Մ Ն Ե Ր

1. **Նախարարություն** – Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:

2. **Ծրագիր 1** – (1045-12003) «Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում» (09030101):

3. **Ծրագիր 2** – (1045-120034) «Միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում» (09030201):

4. **Ծրագիր 3** – (1075-11004) «Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ» (08020201):

5. **Ծրագիր 4** – (1111-12003) «Բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում» (09040102):

6. **Ծրագիր 5** – (1146-12003) «Հանրակրթության ծրագիր» (Պարտադիր կրթության երրորդ մակարդակում սովորողների ընդգրկվածության, գրագիտության և համակողմանի զարգացման բարձր մակարդակի ապահովում)» 09020202):

7. **Ծրագիր 6** – (1148-11001) «Արտադպրոցական դաստիարակության ծրագիր» (09050102):

8. **Ծրագիր 7** – (1168 - 11003) «Արվեստների ծրագիր (Թատերական ներկայացումներ)» (08020508):

9. **Ծրագիր 8** – (1168 - 11004) «Արվեստների ծրագիր (Երաժշտարվեստի և պարարվեստի համերգներ)» (08020509):

10. **Ծրագիր 9** – (1193 - 11001) «Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ (Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպմանն օժանդակող միջոցառումներ)» (09060131):

11. **Ծրագիր 10** – (1192 - 32002) «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Կրթության բարելավման ծրագիր» ծրագրի շրջանակներում կապիտալ ներդրումներ ավագ, միջնակարգ և հիմնական դպրոցներում և կրթության ոլորտի կազմակերպություններում /ԿՏԱԿ/» (09060135):

12. **ԾՐԱԳՐԵՐ - Ծրագիր 1-ից Ծրագիր 10-ը** նեոռայալ:

3. ԱՄՓՈՓԱԳԻՐ

Նախարարության թվով 10 ԾՐԱԳՐԵՐ –ից 4-ում (Ծրագիր 3, Ծրագիր 5, Ծրագիր 7 և Ծրագիր 8) 2020թ.-ի առաջին կիսամյակի պլանի և ճշտված պլանի միջև տարբերությունները կազմել են 1,717,538.2 հազ. դրամ, որոնք հիմնավորված են ՀՀ կառավարության թվով 7 որոշումներով և թվով մեկ ՀՀ ֆինանսների նախարարություն սահմանված կարգով ներկայացված ծանուցմամբ: Նշված ծրագրերում 2020թ.-ի ՀՀ տարեկան պետական բյուջեի վերաբաշխումները տրված են ստորև (Տես՝ Աղյուսակ 1)

Աղյուսակ 1

Ծրագիր 3, Ծրագիր 5, Ծրագիր 7 և Ծրագիր 8 – ների պլանի և ճշտված պլանի տարբերությունների հիմնավորումների

(հազ. դրամ)

Թիվ	2020 թ.-ի պլան	Վերաբաշխ ված գումար	2020 թ.-ի ճշտված պլան	Հիմնավորումներ
1	2	3	4	5
Ծրագիր 3				
1	850,010.6	5,935.8	855,946.4	ՀՀ կառավարության 2020թ. ապրիլի 9-ի թիվ 538-Ն որոշում:
2	855,946.4	5,604.0	861,155.4	ՀՀ կառավարության 2020թ. մայիսի 21-ի թիվ 837-Ն որոշում:
3	861,155.4	7,239.4	868,7899.8	ՀՀ կառավարության 2020թ. հունիսի 18-ի թիվ 980-Ն որոշում:
4	868,7899.8	459,417.5	1,328,207.3	ՀՀ կառավարության 2020թ. հունիսի 25-ի թիվ 1075-Ն որոշում:
Ընդամենը՝		478,196.7		
Ծրագիր 5				
1	1,165,628.4	108,172.8	1,273,801.2	Ծանուցում ՀՀ ֆինանսների նախարարություն:
Ընդամենը՝		108,172.8		
Ծրագիր 7				
1	822,538.0	7,344.0	829,882.0	ՀՀ կառավարության 2020թ. մայիսի 21-ի թիվ 837-Ն որոշում
2	829,882.0	418,630.8	1,248,512.8	ՀՀ կառավարության 2020թ. հունիսի 25-ի թիվ 1075-Ն որոշում:
Ընդամենը՝		425,974.8		
1	2	3	4	5

Ծրագիր 8				
1	1,086,387.0	253,930.0	1,340,317.0	ՀՀ կառավարության 2020թ. ապրիլի 2-ի թիվ 481-Ն որոշում:
2	1,340,317.0	3,081.6	1,343,398.6	Ծանուցում ՀՀ ֆինանսների նախարարություն:
3	1,343,398.6	- 5,935.8	1,337,462.8	ՀՀ կառավարության 2020թ. ապրիլի 9-ի թիվ 538-Ն որոշում:
4	1,337,462.8	9,000.0	1,346,462.8	ՀՀ կառավարության 2020թ. հունիսի 11-ի թիվ 941 - Ն որոշում:
5	1,346,462.8	445,118.1	1,791,580.9	ՀՀ կառավարության 2020թ. հունիսի 25-ի թիվ 1075-Ն որոշում:
Ընդամենը՝		705,193.9		
Ամբողջը՝		1,717,538.2		

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ -ից, բացառությամբ Ծրագիր 1-ի, Ծրագիր 2-ի և Ծրագիր 10-ի, մնացած թվով 7 ծրագրերում 2020թ.-ի առաջին կիսամյակի ճշտված ճշտված պլանի և ֆինանսավորման միջև տարբերությունները կազմել են 3,514,855.6 հազ. դրամ: Թերֆինանսավորման պատճառները կապված են մի շարք հանգամանքների հետ: (Տես՝ Աղյուսակ 2)

Աղյուսակ 2

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ից թվով 7-ի ճշտված պլանի նկատմամբ
թերֆինանսավորման պատճառների

(հազ. դրամ)

Թիվ	Ծրագրեր	2020թ.-ի առաջին կիսամյակ			Թերֆինանսավորման պատճառները
		Ճշտված պլան	Ֆինանսավորում	Թերֆինանսավորում	
1	2	3	4	5	6
1	Ծրագիր 3	1,328,207.3	846,186.2	482,021.1	Երկրում կորոնավիրուսային համավարակի արդյունքում ստեղծված իրավիճակ, ինչպես նաև՝ հարկային պարտավորությունների մարման գումար, որի ֆինանսավորումն իրականացվել է 2020թ.-ի հուլիսի սկզբին:
2	Ծրագիր 4	3,922,292.7	3,921,992.7	300.0	Տնտեսում:
3	Ծրագիր 5	4,386,655.6	4,368,797.5	17,858.1	2020 թ.-ի պետական բյուջեով հաստատված տարեկան ֆինանսավորման գումարի և սահմանված կարգով բանաձևով հաշվարկված գումարի տարբերություն:
1	2	3	4	5	6

4	Ծրագիր 6	1,273,801.2	1,064,420.3	209,380.9	Տնտեսում է, որը պայմանավորված է երկրում կորոնավիրուսի տարածման պատճառով որոշ միջոցառումների չիրականացմամբ կամ հետաձգմամբ:
5	Ծրագիր 7	1,248,512.8	811,513.8	436,999.0	Տնտեսումը պայմանավորված է «Խորեգրաֆիայի թատրոն» ՊՈԱԿ-ի հետ պայմանագրի բացակայությամբ, ԱԱՀ-ի վերադարձով, ինչպես նաև ՀՀ կառավարության .25,06,2020թ.-ի թիվ 1075-Ն որոշման համաձայն նախորդ տարիների ԱԱՀ-ի գծով հարկային պարտավորությունների մարման գումարով, որը վճարվել է հուլիսին:
6	Ծրագիր 8	1,791,580.9	1,335,131.9	456,449.0	Տնտեսումը պայմանավորված է ԱԱՀ-ի վերադարձով և ՀՀ կառավարության 25,06,2020 թ.-ի թիվ 1075-Ն որոշման համաձայն նախորդ տարիների ԱԱՀ-ի գծով հարկային պարտավորությունների մարման գումարով (445,118.1 հազ. դրամ), որի ֆինանսավորումն իրականացվել է հուլիսի սկզբին:
7	Ծրագիր 9	2,389,807.0	477,959.5	1,911,847.5	2020թ.-ի առաջին կիսամյակի ճշտված պլանը՝ ըստ վարկային և համաֆինանսավորման միջոցների հանրագումարով է, իսկ ֆինանսավորումը՝ ըստ համաֆինանսավորման միջոցների, չի ներառված վարկային միջոցների ֆինանսավորման ցուցանիշը: Համաֆինանսավորման 477,959.5 հազ. դրամին գումարելով վարկային միջոցներից ստացված ֆինանսավորումը (1,280,669.9 հազ. դրամ), տարբերությունը կկազմի՝ +631,177.6 հազ. դրամ (2,389,807.0- (477,959.5 + 1,280,669.9)) : Այն պայմանավորված է վարկային միջոցների ֆինանսավորման առանձնահատկությամբ, որը հատկացվում է նախորդ ժամանակաշրջանի փաստացի վճարումների հիման վրա:
Ընդամենը՝		16,340,857.5	12,826,001.9	3,514,855.6	

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ –ից թվով 3-ում (Ծրագիր 7, Ծրագիր 8 և Ծրագիր 9) 2020թ.-ի առաջին կիսամյակի ֆինանսավորման և դրամարկղային ծախսի միջև տարբերությունները կազմել են 1,565,121.2 հազ. դրամ, որի պատճառները պայմանավորված են մի շարք հանգամանքների հետ: (Տես՝ Աղյուսակ 3)

Աղյուսակ 3

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ից թվով 3 -ի ֆինանսավորման և
դրամարկղային ծախսի տարբերության պատճառները

(հազ. դրամ)

Թիվ	Ծրագրեր	2020թ.-ի առաջին կիսամյակ			Տարբերության պատճառները
		Ֆինան- սավորում	Դրամար- կղային ծախս	Տարբերու- թյուն (+, -)	
1	Ծրագիր 7	811,512.8	810,283.8	1,230.0	Տնտեսումը՝ 4,243.9 հազ. դրամը, պայմանավորված է մի կողմից ճշտած պլանի և ֆինանսավորման, մյուս կողմից՝ ճշտած պլանի և դրամարկղային ծախսի միջև գոյացած տարբերությունների բացարձակ շեղմամբ:
2	Ծրագիր 8	1,335,131.9	1,332,117.0	3,014.9	
Ընդամենը՝		2,146,644.7	2,142,400.8	4,243.9	

Ինչ վերաբերում է Ծրագիր 9-ին, ապա 2020թ.-ի առաջին կիսամյակի 1,911,847.5 հազ. դրամ ճշտված պլանի և դրամարկղային ծախսի տարբերությունը հիմնականում պայմանավորված է ավագ դպրոցների հիմնանորոգման աշխատանքների նախատեսված ժամանակացույցերից որոշակի շեղմամբ, ինչպես նաև՝ ավագ դպրոցներին լաբորատոր գույքի մատակարարման պայմանագրերում կատարված փոփոխությամբ՝ կապված հանրապետությունում հայտարարված արտակարգ դրությամբ և դրանից բխող սահմանափակումներով: Առկա է նաև որոշակի տնտեսում, ինչը պայմանավորված է լաբորատոր սարքավորումների ներմուծման համար նախապես հաշվարկված և փաստացի վճարված մաքսատուրքերի տարբերությամբ: Միաժամանակ, 2020թ.-ի առաջին կիսամյակի ֆինանսավորումը արտացոլված է միայն համաֆինանսավորման միջոցների ֆինանսավորման ցուցանիշով, իսկ դրամարկղային ծախսում ներկայացված են ծախսերը համաֆինանսավորման և վարկային միջոցների հանրագումարով: Ուստի տվյալների համադրելիությունը կապահովվի միայն վարկային միջոցների ֆինանսավորման ցուցանիշը ներառելով, այն է՝ 1,280,669.9 հազ. դրամ: Արդյունքում ֆինանսավորման և դրամարկղային ծախսի իրական տարբերությունը կկազմի -288,696.2 հազ.դրամ ((477,959.5 + 1,280,669.9) – 2,047,325.6):

Արդյունքում, դրամարկղային ծախսը 288,696.2 հազ.դրամով գերազանցել է ֆինանսավորման չափին՝ նախորդ տարվա վարկային միջոցների առկա մնացորդի հաշվին:

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ից թվով 9-ում 2020թ.-ի առաջին կիսամյակի դրամարկղային և փաստացի ծախսերի միջև ընդհանուր տարբերությունը կազմել է 14,518.5 հազ. դրամ, ընդ որում թվով 4 ծրագրերում (Ծրագիր 1, Ծրագիր 2, Ծրագիր 5 և Ծրագիր 10) դրամարկղային ծախսերը գերազանցել են փաստացի ծախսերին (ընդամենը՝ 275,022.9 հազ. դրամ), իսկ մնացած թվով 5 ծրագրերում փաստացի ծախսերն են գերազանցել դրամարկղային փաստացի ծախսերին (ընդամենը՝ 260,504.4 հազ. դրամ):

Ծրագիր 9-ում 2020թ.-ի առաջին կիսամյակում փաստացի և դրամարկղային ծախսերի տարբերությունը կազմում է 269,804.9 հազ. դրամ, որը պայմանավորված է հետևյալ երեք պատճառներով.

1. Համաձայն կապալառուների հետ կնքված պայմանագրերի հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կատարված աշխատանքների կատարողական ակտերից համամասնորեն մարվել են նաև 2019թ.-ին փոխանցված կանխավճարային գումարները, ինչպես նաև կապալառուների կողմից ներկայացրած յուրաքանչյուր կատարողական ակտի գումարից պահվել է երաշխիքային գումար՝ 5%-ի չափով, մինչև հիմնանորոգման աշխատանքների վերջնական ավարտը:

2. Համաձայն լաբորատոր սարքավորումների մատակարարման պայմանագրերի մատակարարած սարքավորումների գումարներից մարվել են նաև 2019թ.-ին փոխանցված կանխավճարային գումարները:

3. Համաձայն լաբորատոր գույքի մատակարարման պայմանագրերի պայմանագրային արժեքների 5% վճարումը նախատեսված են 2020թ.-ի երրորդ եռամսյակում՝ պայմանագրերով նախատեսված հարակից ծառայությունների ավարտից հետո:

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի թվով 9-ում (բացի Ծրագիր 9-ը) 2020թ.-ի առաջին կիսամյակի փաստացի և դրամարկղային ծախսերի տարբերությունները, դեբիտորական և կրեդիտորական պարտքերի աճերի, նվազումների համամասնությունները պայմանավորված են՝

1. Դեբիտորական պարտքերի գծով հիմնականում հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ դրամական միջոցների մնացորդների և ապրանքանյութական պաշարների առկայությամբ:

2. Կրեդիտորական պարտքերի գծով գերազանցապես 2020թ.-ի հունիս ամսվա հաշվարկված, բայց հուլիս ամսին վճարված աշխատավարձերի, արձակուրդային վճարների, կոմունալ ծախսերի, ինչպես նաև համաձայն ընդունման- հանձնման արձանագրության, առաջին կիսամյակում պլանավորված որոշ գործառույթներ, աշխատանքներ և այլ ծախսեր չեն կատարվել՝ ելնելով երկրում սահմանված արտակարգ իրավիճակից:

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ից թվով 9-ում դրամարկղային և փաստացի ծախսերի, ինչպես նաև դեբիտորական և կրեդիտորական պարտքերի փոփոխությունների համամասնությունների, տարբերությունների պատճառների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է ստորև (Տես՝ Աղյուսակ 4)

Աղյուսակ 4

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ից թվով 9 -ում դրամարկղային և փաստացի ծախսերի, դեբիտորական և կրեդիտորական պարտքերի փոփոխությունների համամասնությունների, տարբերությունների պատճառների վերաբերյալ

(հազ. դրամ)

Թիվ	Ծրագրեր	2020թ.-ի առաջին կիսամյակ						
		Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս	Տարբերություն (+, -)	Դեբիտորական պարտքերի աճ, նվազում (+, -)	Կրեդիտորական պարտքերի աճ, նվազում (+, -)	Բացարձակ շեղում (+, -)	Սյունակ 8 - Սյունակ 7 (+, -)
1	2	3	4	5	6	7	8	9
1	Ծրագիր 1	1,134,963.0	1,225,488.0	- 9,475.9	57,269.3	47,793.4	9,475.9	0,0
2	Ծրագիր 2	3,815,810.5	3,650,519.5	- 165,282.0	305,254.6	139,972.6	165,282.0	0,0
3	Ծրագիր 5	4,368,797.5	871,371.0	- 51,309.5	199,826.7	158,386.9	41,439.8	-9,868.7

1	2	3	4	5	6	7	8	9
4	Ծրագիր 10	920,326.5	4,317,488.0	-48,955.5	105,427.8	43,394.7	62,033.1	13,077.6
	Ընդամենը՝	10,239,889.4	9,964,866.5	-275,022.9	-667,778.4	389,547.6	-278,230.8	3,208.7

5	Ծրագիր 3	846,186.2	849,239.7	+3,053.5	46,553.5	49,607.0	-3,053.5	0,0
6	Ծրագիր 4	3,921,992.7	4,004,151.6	+82,158.9	-13,120.5	69,038.4	-82,158.9	0,0
7	Ծրագիր 6	1,064,420.3	1,168,205.7	+103,785.4	33,503.7	137,289.0	-103,785.4	0,0
8	Ծրագիր 7	810,283.8	835,495.6	+25,211.8	-10,606.9	14,604.9	-25,211.8	0,0
9	Ծրագիր 8	1,332,117.0	1,378,411.8	+46,294.8	38,609.3	84,904.1	-46,294.8	0,0
	Ընդամենը՝	7,975,000.0	8,235,504.4	+260,504.4	94,939.0	355,443.4	-260,504.4	0,0
	Ամբողջը՝	18,214,889.4	18,200,370.9	-14,518.5	762,717.5	744,991.1	-17,726.4	3,207.8

4. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՕՐՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի շրջանակներում 2020 թվականի առաջին կիսամյակի պլանը կազմել է 20,494,411.2 հազ. դրամ, ճշտված պլանը՝ 22,211,949.4 հազ. դրամ: Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի ֆինանսավորումը կազմել է 18,697,093.8 հազ. դրամ, դրամակղային ծախսը՝ 20,262,215.0 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 20,517,501.4 հազ. դրամ:

Նախարարության և ԾՐԱԳՐԵՐ-ի 2020թ.-ի տարեկան ֆինանսական ամփոփ ցուցանիշները տրված են աղյուսակ 5-ում, իսկ Նախարարության և ԾՐԱԳՐԵՐ-ի 2020թ.-ի առաջին կիսամյակի ֆինանսական ցուցանիշները՝ աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 5

Նախարարության և ԾՐԱԳՐԵՐ-ի 2020 թվականի տարեկան ամփոփ
ֆինանսական ցուցանիշներ

(հազ. դրամ)

Ծրագրային բյուջետային ֆինանսավորման անվանումը, (ծածկագիրը)	Տարեկան պլան	Փոփոխու- թյուններ տարեկան պլանում ՀՀ կառավարու- թյան կողմից	Տարեկան ճշտված պլան	2020 թ.-ի առաջին կիսամյակի դրամարկղային ծախսը	Կատարման %-ը տարեկան ճշտված պլանի նկատմամբ	Տարեկան պլանի մնացորդ՝ առաջին կիսամյակի դրությամբ
1	2	3	4	5	6	7
Նախարարություն (104010)	74,167,479.7	6,574,445.4	80,741,925.1	31,853,358.8	39,8	48,166.645,2

Նախարարության Ծրագիր 1	2,522,142.0	-	2,522,142.0	1,134.96.9	45,0	1,387,178,1
Նախարարության Ծրագիր 2	8,479,558.8	-	8,479,558.8	3,815,801.5	45,0	4,663,757.3
1	2	3	4	5	6	7

Նախարարության Ծրագիր 3	1,917,535.7	504,845.2	2,422,380.9	846,186.2	35,0	1,576,194.8
Նախարարության Ծրագիր 4	10,0567,160.9	--	10,0567,160.9	3,921,992.7	39,0	6,135,168.2
Նախարարության Ծրագիր 5	8,952,358.4	--	8,952,358.4	4,368,797.5	49,0	4,583,560.9
Նախարարության Ծրագիր 6	2,673,459.6	--	2,673,459.6	1,064,420.3	40,0	1,609,039.3
Նախարարության Ծրագիր 7	1,808,703.2	425,974.8	2,234,678.0	810,283.8	36,3	1,424,394.2
Նախարարության Ծրագիր 8	2,306,470.3	961,561.2	3,268,031.4	1,332,117.0	41,0	1,935,914.4
Նախարարության Ծրագիր 9	3,087,195.1	--	3,087,195.1	2,047,325.6	66,3	1,039,869.5
Նախարարության Ծրագիր 10	2,019,031.5	--	2,019,031.5	920,326.5	46,0	1,098,705.0
ԸՆԴԱՄԵՆՆՐ ԾՐԱԳՐԵՐ՝	43,823,615.5	1,892,381.1	45,715,996.6	20,262,215.0	44,0	25,453,781.6

Աղյուսակ 6

Նախարարության և ԾՐԱԳՐԵՐ-ի 2020 թվականի առաջին կիսամյակի
ֆինանսական ցուցանիշներ

(հազ. դրամ)

Ծրագրային բյուջետային ֆինանսավորման անվանումը, (ծածկագիրը)	2020 թվականի առաջին կիսամյակ						Կատարման %-ը հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանի նկատմամբ
	Պ Լ ա ն	Փոփոխություններ տարեկան պլանում ՀՀ կառավարության կողմից	Ճ Շ տ վ ա ծ պ Լ ա ն	Ֆինանսավորում	Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս	
1	2	3	4	5	6	7	8
Նախարարություն (104010)	35,136,339.9	4,473,597.0	39,609,936.9	31,666,402.4	31,853,358.8	32,393,141.3	80.4

Նախարարության Ծրագիր 1	1,134,963.9	--	1,134,963.9	1,134,963.9	1,134,963.9	1,125,488.0	100,0
Նախարարության Ծրագիր 2	3,815,801.5	--	3,815,801.5	3,815,801.5	3,815,801.5	3,650,519.5	100,0
Նախարարության Ծրագիր 3	850,010.6	478,196.7	1,328,207.3	846,186.2	846,186.2	849,239.7	63,8
Նախարարության Ծրագիր 4	3,922,292.7	--	3,922,292.7	3,921,992.7	3,921,992.7	4,004,151.6	99.0
1	2	3	4	5	6	7	8

Նախարարության Ծրագիր 5	4,386,655.6	--	4,386,655.6	4,368,797.5	4,368,797.5	4,317,488.0	99.0
Նախարարության Ծրագիր 6	1,165,628.4	108,172.8	1,273,801.2	1,064,420.3	1,064,420.3	1,168,205.7	84.0
Նախարարության Ծրագիր 7	822,538.0	425,974.8	1,248,512.8	811,512.8	810,283.8	835,495.6	65.0
Նախարարության Ծրագիր 8	1,086,387.0	705,193.9	1,791,580.9	1,335,131.9	1,332,117.0	1,378,411.8	74.3
Նախարարության Ծրագիր 9	2,389,807.0	--	2,389,807.0	477,959.5	2,047,325.5	2,317,130.5	85.0
Նախարարության Ծրագիր 10	920,326.5	--	920,326.5	920,326.5	920,326.5	871,371.0	100.0
ԸՆԴԱՄԵՆՆԵՐ ԾՐԱԳՐԵՐ՝	20,494,411.2	1,717,538.2	22,211,949.4	18,697,093.8	20,262,215.0	20,517,501.4	91.0

5. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Վ Ե Ր Ա Բ Ե Ր Յ Ա Լ Գ Ր Ա Ռ ՈՒ Մ Ն Ե Ր

Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրվել է Նախարարության ենթակայության «Երևանի զարդարվեստի պետական արհեստագործական ուսումնարան» ՊՈԱԿ-ի (Այսուհետ՝ Ուսումնարան) կողմից 2020թ.-ի առաջին կիսամյակում կատարված գնումների գործընթացը, ըստ որի գնումները կատարվել են բացառապես «Մեկ անձից գնում» ընթացակարգով:

Ուսումնասիրությունների արդյունքում պարզվեց, որ.

1. Նախարարության Ուսումնարանի կողմից «Procurement. am» տեղեկագրում չեն հրապարակվել գնման հրավերները, պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունները, կնքված պայմանագրի մասին որոշումները, ընտրված մասնակցի վերաբերյալ որևէ տեղեկատվություն: Առկա են անհամապատասխանություններ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168 –Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 526-Ն որոշման 7-րդ բաժնի 34-րդ կետի պահանջների հետ:

2 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն Ուսումնարանը կատարել է գնում ընդամենը թվով 12 չափաբաժիններով՝ 709,0 հազար դրամ գումարի չափով: Բացակայում են գնման նպատակով կատարված գործողությունների և դրանց հիմքերի վերաբերյալ էլեկտրոնային փաստաթղթերը, մասնավորապես՝ մասնակիցներին ուղարկված հրավերները: Առկա են անհամապատասխանություններ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-ին մասի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168 –Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 526-Ն որոշման 7-րդ բաժնի 34-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջների հետ:

3 Ուսումնարանը 2020թ.-ի տարեկան գնումների պլանով նախատեսված հեռախոսային և համացանցային ծառայությունների մասով գնում չի հայտարարվել, պայմանագիր չի կնքվել, շարունակել է օգտվել «Վեոն Արմենիա» ՓԲԸ-ի կողմից մատուցվող ծառայություններից՝ 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում վճարելով 75,6 հազ. դրամ գումար: Առկա են անհամապատասխանություններ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի ա ենթակետի, 3-րդ և 4-րդ կետերի պահանջների հետ:

4. Նախարարության ենթակայության թվով 108 ավագ դպրոցներից ՀՀ հաշվեքննիչ պալատին տրամադրված 24-ից (2020թ.-ի համար հաշվարկված տարեկան ընդհանուր ֆինանսավորումը 2,320,788.3 հազար դրամ) թվով 2-ում («Երևանի Գ.Գյուլբեկյանի անվան թիվ 190 ավագ դպրոց» և «Աշտարակի Ն. Սիսակյան անվան թիվ 5 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ներ) ընդհանուր 1119 աշակերտների համար Նախարարության և ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից հաշվարկված տարեկան ֆինանսավորման ենթակա գումարները համընկնում են (246,528.4 հազ. դրամ կամ 10,6%): Թվով 2 ավագ դպրոցների («ՀԱՊՀ Գյումու մասնաճյուղ ավագ դպրոց» և «Գյումրու տնտեսագիտական վարժարան» ՊՈԱԿ-ներ) ընդհանուր 519 աշակերտների համար 2020 թ.-ի տարեկան ֆինանսավորման ենթակա գումարները ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից հաշվարկվել և կազմում են 135,683.6 հազ. դրամ, իսկ Նախարարությունը հաշվարկել է 125,738.5 հազ. դրամ (թերֆինսավորումը՝ 9,945,1 հազար դրամ կամ 0,4 %):

Դիտարկված թվով 24 ավագ դպրոցներից մնացած 20 -ում (աշակերտների թիվը՝ 8007) Նախարարության կողմից 2020թ.-ի տարեկան ֆինանսավորման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 1,947,521.4 հազ. դրամ, իսկ ՀՀ հաշվեքննիչ պալատի հաշվարկներով այն կազմում է 1,547,490.3 հազ. դրամ (տարբերությունը՝ 401,031.1 հազար դրամ կամ 17,3 %), որոնք վերաբերում են ինչպես Երևան քաղաքի 3868 աշակերտներով թվով 7 (880,778.2 հազ. դրամ կամ 45,4 %), այնպես էլ՝ ՀՀ մարզերի 4658 աշակերտներով թվով 15 ավագ դպրոցներին (1,193,481.7 հազ. դրամ կամ 54,6 %): Մասնավորապես, Նախարարության ենթակայության «Աբովյանի Խ. Աբովյանի անվան թիվ 1 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի 2020 թ.-ի տարեկան ֆինանսավորման հաշվարկով 364 աշակերտների բազայի հիման վրա գումարը կազմել է 103,449.6 հազար դրամ, իսկ ՀՀ հաշվեքննիչ պալատի հաշվարկով՝ 69.222.4 հազ. դրամ, տարբերությունը կազմում է 34,227.2 հազ. դրամ կամ 33,1 %: (Տես՝ Հավելված 1)

Առկա են թվով 22 ավագ դպրոցների տարեկան ֆինանսավորման հաշվարկների հետ կապված անհամապատասխանություններ ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 31-ի «ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի թիվ 1262-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 1503-Ն որոշմամբ սահմանված բանաձևի, ինչպես նաև Նախարարի 2020թ.-ի հունվարի 31-ի «2020 թվականին ըստ սովորողների թվի ֆինանսավորման բանաձևի գործակիցների մասին» թիվ 73-Ա/2 հրամանով սահմանված գործակիցների և կանոնակարգերի կիրառման հետ:

6. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

6.1 Նախարարության Ծրագիր 1-ի (թվով 53 կազմակերպություններ) և Ծրագիր 2-ի (թվով 79 կազմակերպություններ) ոչ ֆինանսական, արդյունքի չափորոշիչները ներկայացվում են ստորև: (Տես՝ Աղյուսակ 6)

(Աղյուսակ 6)

Թիվ	Արդյունքի չափորոշիչներ	Ծրագրեր	2020թ. առաջին կիսամյակ			
			Ճշտված պլան (Միջին տարեկան)	Փաստացի	Տարբերություն	Տեսակարար կշիռ (%)
1	Ուսանողական նպաստ ստացող ուսանողներ (Մարդ)	Ծրագիր 1	8300	5687	-2613	31,5
		Ծրագիր 2	22229	17510	-4769	21,5
		Ընդամենը՝	30529	23197	-7332	24,1
2	Կարիերայի կենտրոնների ծառայություններից օգտված սովորողներ և շրջանավարտներ (Մարդ)	Ծրագիր 1	1700	1715	+15	0.9
		Ծրագիր 2	5300	9523	+4223	179.7
		Ընդամենը՝	7000	11238	+4238	60,5

Ծրագիր 1-ում և Ծրագիր 2-ում ուսանողական նպաստ ստացող սովորողների, ինչպես նաև կարիերայի կենտրոնների ծառայություններից օգտված սովորողների և շրջանավարտների թվաքանակների տարբերությունները պայմանավորված են ՀՀ-ում համավարակով պայմանավորված հայտարարված արտակարգ դրությամբ և նպաստ ստացող ուսանողների փաստացի թվերով, որոնք 2020թ.-ի առաջին կիսամյակի տվյալներով փոփոխությունների չեն ենթարկվել, քանի որ Նախարարության կողմից նշված ծրագրերում վերաբաշխումները և նպաստառու սովորողների թվաքանակների և ֆինանսավորման փոփոխությունները, ելնելով կրթական ծրագրերի առանձնահատկություններից, իրականացվում են «հունվար-սեպտեմբեր» պարբերությամբ:

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ Նախարարության կողմից ՀՀ հաշվեքննիչ պալատին տրամադրված տեղեկատվության (Նախարարի 29.09.2020թ.-ի թիվ 01/172/25934-20 գրություն, Հավելվածներ 2-1, 2-2) համաձայն Ծրագիր 2-ի կազմակերպությունների քանակը 79-ն է, իսկ համապատասխան ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշները չեն համապատասխանում Նախարարության կողմից հաստատագրված տվյալների հետ, առկա են

տարբերություններ, մասնավորապես, 2020 թ.-ի առաջին կիսամյակի փաստացի ծախսի՝ 3,283.0 հազար դրամ (3,650,519.0 հազ. դրամ - 3,617,680.0 հազ. դրամ), դեբիտորական պարտքի՝ 32,796.8 հազ. դրամ (537,302.1 հազ. դրամ - 504,505.2 հազ. դրամ), կրեդիտորական պարտքի՝ 42.0 հազ. դրամ (153,546.2 հազ. դրամ - 153,504.2 հազ. դրամ) և սովորողների թվի 48 (17558-17510) ներկայացված տվյալները: Նշված հանգամանքները կարիք ունեն ճշգրտումների, պարզաբանումների և բացատրությունների:

6.2 Նախարարության Ծրագիր 3-ի 2020թ.-ի առաջին կիսամյակի ոչ ֆինանսական, արդյունքի չափորոշիչները ներկայացվում են ստորև: (Աղյուսակ 7)

(Աղյուսակ 7)

Նախարարության Ծրագիր 3-ի արդյունքային ոչ ֆինանսական չափորոշիչների տվյալներ

Ծրագիր 3-ի արդյունքի չափորոշիչներ (ոչ ֆինանսական տվյալներ)	Տարեկան ճշտված պլան	2020թ. առաջին կիսամյակ		
		Ճշտված պլան (նախատեսված)	Փաստացի	Տարբերություն
1. Պահպանվող թանգարանային առարկաներ (քանակ)	1859952	1858643	1912549	- 53906
2. Պահպանվող գրադարանային առարկաներ (թիվ)	241342	241342	241342	0
3. Սպասարկվող թանգարանային այցելուներ (քանակ)	1085864	459837	120551	- 339286
4. Սպասարկվող գրքեր (միավոր)	2650	1360	706	- 654
5. Սպասարկվող ընթերցողներ (քանակ)	950	380	188	- 192
6. Ձեռքբերված գրադարանային միավորներ (թիվ)	110	40	0	- 40
7. Թանգարանային առարկաների համալրում (թիվ)	2095	785	1951	+ 1166
8. Կազմակերպվող ցուցահանդեսներ (թիվ)	203	79	30	- 49
9. Թանգարանային առարկաների վերականգնում (թիվ)	461	282	73	- 209
10. Վերապատրաստումներ (քանակ)	50	15	0	- 15
11. Վերապատրաստումներին մասնակցած մասնագետներ (քանակ)	3	1	0	- 1
12. Համերգների քանակ	12	4	0	- 4
13. Հանդիսատեսի թվաքանակ	2016	672	0	- 672

Հաշվեքննության ժամանակ պարզվեց, որ թվով 13 թանգարանների ոչ ֆինանսական արդյունքին միտված ցուցանիշներից, բացի «Պահպանվող գրադարանային առարկաներ» (նախատեսված ցուցանիշը պահպանվել է) և

«Թանգարանային առարկաների համալրում» (նախատեսված ցուցանիշը գերազանցվել է 1166-ով) բաղադրիչներից մնացած թվով 6-ում արձանագրվել են նվազման, իսկ 5-ում զրոյական տվյալներ, որոնք պայմանավորված են երկրում կորոնավիրուսային համավարակի արդյունքում ստեղծված իրավիճակով:

6.3 Նախարարության Ծրագիր 4-ի համար ոչ ֆինանսական, արդյունքի չափորոշիչներում տարբերություններ չեն առաջացել: Ուսման վարձրավճարի լրիվ (100 %), փոխհատուցմամբ սովորող թվով 820 ուսանողների և տարբեր չափաբաժիններով զեղչվող (30-ից 90 %), պետության կողմից ուսանողական նպաստներ ստացող թվով 11819 ուսանողների նախատեսված (միջին տարեկան թիվ) և փաստացի տվյալները 2020թ.-ի առաջին կիսամյակի տվյալներով փոփոխությունների չեն ենթարկվել, քանի որ Նախարարության կողմից Ծրագիր 4-ում վերաբաշխումները, նպաստառու ուսանողների թվաքանակների և ֆինանսավորման փոփոխությունները, ելնելով բուհական կրթական ծրագրերի առանձնահատկություններից, իրականացվում են «հունվար-սեպտեմբեր» պարբերությամբ: Անկախ այն հանգամանքից, որ ուսանողական նպաստ ստացող ուսանողների միջին տարեկան թվի ճշգրտումը իրականացվում է յուրաքանչյուր տարվա հունվար և սեպտեմբեր ամիսներին, փաստացի թիվը և պետական բյուջեից ուսման վարձի փոխհատուցմամբ տրամադրված ուսանողական նպաստը բուհական հաստատությունների ամփոփ տվյալներից բացի ըստ նպաստների տարրակազմի, թվով 15 տեսակների բաշխման և բազայավորման կարգավիճակի, Նախարարությունը 2020թ.-ի առաջին կիսամյակի դրությամբ ՀՀ հաշվեքննիչ պալատին չի տրամադրել: Ծրագիր 4-ի արդյունքային, ոչ ֆինանսական ցուցանիշների, ֆինանսական տեղեկատվության և գանձապետական համակարգի քաղվածքների համադրումը կարող է առաջացնել հնարավոր ռիսկերով պայմանավորված անհամապատասխանություններ՝ հանգեցնելով լրացուցիչ ուսումնասիրությունների և հետազոտությունների անհրաժեշտության:

6.4 Նախարարության Ծրագիր 5-ի թվով 108 ավագ դպրոցներում, ըստ ներկայացված ոչ ֆինանսական, արդյունքի չափորոշիչների նախատեսված 31374 աշակերտների դիմաց փաստացին կազմել է 29611 (տարբերությունը՝ 1763 աշակերտ): Համաձայն Նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության ավագ դպրոցների աշակերտների 2020թ.-ի առ 01 հուլիսի 2020 թ.-ի փաստացի թիվը կազմում է 29611 (Նախարարի 29.09.2020թ.-ի թիվ 01/172/25934-20 գրություն, հավելված 5-2), սակայն ոչ ֆինանսական տեղեկատվությամբ այն կազմում է 29547 (Նախարարի 29.09.2020թ.-ի թիվ 01/172/25934-20 գրություն, հավելված 5-3), 64 աշակերտների տարբերությունը վերաբերում է «Հայաստանի պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի ավագ դպրոցի աշակերտների փաստացի թվին: Միաժամանակ, ավագ դպրոցների Նախարարության կողմից տրամադրված նյութերում բացակայում են «Ավագ

դպրոցներ» և «Առանձին գործող ավագ դպրոցներ» սյունակների պահանջվող տեղեկատվությունը, որոնք համարվում են ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 31-ի «ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի թիվ 1262-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 1503-Ն որոշմամբ հաստատված բանաձևի տարեկան ֆինանսավորման գործակիցների բաղադրիչներ:

6.5 Նախարարության Ծրագիր 6-ի թվով 36 մարզադպրոցներում ըստ 2020թ.-ի առաջին կիսամյակի համար ներկայացված ոչ ֆինանսական, արդյունքի չափորոշիչների թվով 9135 սաների նախատեսված ցուցանիշը փաստացի կազմել է 9170: Թվով 35 սաների (1.1 %) դրական տարբերությունը պայմանավորված է արվեստի, երաժշտության, սպորտի դասընթացների մարզադպրոցներում, ստեղծագործական և այլ արտադպրոցական դաստիարակության թվով 10 կենտրոններում արձանագրված սաների փաստացի թվի տարբերությամբ (Տես՝ Հավելված 2): Նախարարության 2020թ.-ի առաջին կիսամյակի դրամարկղային և փաստացի ծախսերի ելակետային ցուցանիշներով, ըստ ՀՀ հաշվեքննիչ պալատին տրամադրված նյութերի (Նախարարի 29.09.2020թ.-ի թիվ 01/172/25934-20 գրություն, հավելված 6-2), պլանը և ճշտված պլանը արտադպրոցական հիմնարկների հանրագումարով կազմում են 1,064,421.9 հազար դրամ: Նախարարության կողմից սահմանված կարգով հաստատագրված պլանի նկատմամբ 101,206.1 հազար դրամի և ճշտված պլանի հետ՝ 209,379.3 հազար դրամի, տարբերությունները ունեն պարզաբանումների կարիք: (Նախարարի 29.09.2020թ.-ի թիվ 01/172/25934-20 գրություն, հավելված 6-1):

6.6 Նախարարության Ծրագիր 7-ի և Ծրագիր 8-ի ոչ ֆինանսական արդյունքի չափորոշիչները ներկայացվում են ստորև (տես՝ Աղյուսակ 8):

(Աղյուսակ 8)

Ծրագիր 7-ի և Ծրագիր 8-ի արդյունքային ոչ ֆինանսական ցուցանիշների
վերաբերյալ

Արդյունքի չափորոշիչներ	Ծրագրեր	Տարեկան ճշտված պլան (Նախա- տեսված)	2020թ. առաջին կիսամյակ			
			Ճշտված պլան (Նախա- տեսված)	Փաս- տացի	Տարբե- րություն	Տեսակա- րար կշիռ (%)
1. Ներկայացումների (համերգների) քանակ (հատ)	Ծրագիր 7	2052	1051	366	-685	65,2
	Ծրագիր 8	454	220	57	-163	74,1
	Ընդամենը՝	2272	1271	423	848	66,7
2. Հանդիսատեսի թվաքանակ (մարդ)	Ծրագիր 7	339535	166788	72252	-94536	56,8
	Ծրագիր 8	146248	69361	18263	-51098	73,7
	Ընդամենը՝	485783	185051	90515	-145634	78,7
3. Նոր ներկայացումների քանակ (հատ)	Ծրագիր 7	45	19	8	-11	57,9
	Ծրագիր 8	20	10	7	-3	30,0
	Ընդամենը՝	65	29	15	-14	48,2
4. Դահլիճի միջին բեռնվածություն (%)	Ծրագիր 7	63,2	67,5	56,4	- 11,1	16,4
	Ծրագիր 8	65,0	65,0	55,0	-10	40,8
	Միջինը՝	64,1	65,4	55,7	10,6	28,6
5. Դպրոցական ֆիլիարմոնիայի գործունեություն Երևանում, մարզերում, համերգ- դասախոսությունների քանակ (հայր)	Ծրագիր 8	45	19	8	-11	16,4

Ծրագիր 7-ում ներկայացումների քանակի 685-ով (65,2%) և հանդիսատեսի թվաքանակի 94536-ով (56,7%) նվազման, նոր ներկայացումների քանակի 11-ով (57,9%), կրճատման, իսկ Ծրագիր 8-ում ներկայացումների քանակի 163-ով (74,1%) և հանդիսատեսի թվաքանակի 52098-ով (73,7%) նվազման և նոր ներկայացումների քանակի 3-ով (30,0%) կրճատման պայմաններում 2020թ. առաջին կիսամյակի փաստացի և դրամարկղային ծախսերի համապատասխանաբար՝ 25,211.8 և 46,294.8 հազ. դրամներով դրական տարբերությունների արձանագրումը պարզաբանումների և բացատրությունների կարիք ունի:

2020թ. 2-րդ եռամսյակում արտակարգ դրության իրավիճակում թատերական ներկայացումներ չեն իրականացվել, իսկ համերգներից իրականացվել են ընդամենը 10-ը: 2020 թ-ի առաջին եռամսյակում, միաժամանակ, նոր ներկայացումների քանակն առաջին եռամսյակի թվով 6-ի փոխարեն առաջին կիսամյակով ներկայացվել է 8-ը (Տրամադրված տեղեկատվությունը ճշգրտման կարիք ունի): Համադրելով հիշատակված ոչ ֆինանսական տեղեկատվությունը 2020թ. երկրորդ եռամսյակում փաստացի ծախսված գումարների հետ, առաջանում են հնարավոր ռիսկեր, որոնք նույնպես բացատրությունների և պարզաբանումների կարիք ունեն:

6.7 Նախարարության Ծրագիր 9-ի թվով 17 մանկավարժա-հոգեբանական կենտրոններում ըստ ոչ ֆինանսական, արդյունքի չափորոշիչների 2020թ.-ի առաջին կիսամյակում նախատեսված «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի բացահայտման համար գնահատվող երեխաներ» բաղադրիչը նվազել է 595 աշակերտով (նախատեսված 1000-ի փոխարեն 405, 59,5%), իսկ «Մանկավարժա-հոգեբանական աջակցության ծառայություններ ստացող երեխաներ» ցուցանիշը՝ 1994 ով (նախատեսված 5700-ի փոխարեն 3706, 53,8%): Նշված տարբերությունները պայմանավորված են երկրում կորոնավիրուսային համավարակի արդյունքում ստեղծված իրավիճակով: Ինչ վերաբերում է ուսումնական նյութերի մշակման, հրապարակման և ձեռքբերման աշխատանքներին, ապա դրանք, ինչպես առաջին եռամսյակում, այնպես էլ՝ առաջին կիսամյակի տվյալներով, հետաձգվել և նախատեսվում են իրականացնել 2020թ. չորրորդ եռամսյակում:

7. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԱՅԼ ԳՐԱՎՈՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՁԵՎԱԶԱՓ

Իմի	Առաջարկություններ	Ընդունելի է/ Ընդունելի չէ	Կատարված է/ Ընթացքում է	Հիմնավորումներ
1	Ճշտված պլանի և դրամարկղային ծախսի տարբերությունը կազմել է 39,804.8 հազ. դրամ, որը չի ծախսվել:	«Ընդունված է»	«Ընթացքում է»	Ճշտված պլանի և դրամարկղային ծախսի տարբերությունը կազմել է 39,804.8 հազ. դրամը կապված է կորոնավիրուսի համավարակով պայմանավորված միջազգային ֆեդերացիաների կողմից միջոցառումների դադարեցման հետ:
2	Նախարարությունը Ֆեդերացիաների հետ դրամաշնորհային պայմանագրերը կնքել է են՝ առանց սահմանված կարգով պահանջվող մրցույթների:	«Ընդունված է»	«Ընթացքում է»	Մրցութային կարգով իրականացվող դրամաշնորհների հատկացման գործընթացը այսուհետ կիրականացվի ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «ՀՀ պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին թիվ 1937-Ն որոշման դրույթներին համաձայն:
3	Նախարարությունը Ֆեդերացիաներում չի իրականացրել սահմանված կարգով մոնիթորիգ և չի վերահսկել գնումների գործընթացը՝ համաձայն կնքված պայմանագրերի:	«Ընդունված է»	«Ընթացքում է»	Նախարարությունը Ֆեդերացիաների հետ կնքված պայմանագրերի պահանջներով նախատեսում է իրականացրել սահմանված կարգի մոնիթորիգ և վերահսկել գնումների գործընթացը՝ մինչև տարեվերջ ժամկետով, ինչպես նաև՝ կորոնավիրուսային համավարակի պատճառով առաջին եռամսյակում իրականացված որոշ միջոցառումների փաստացի ծախսերը ներկայացվելու են երկրորդ եռամսյակում և արտացոլվելու են կիսամյակային հաշվետվության մեջ:
4	2020 թվականի առաջին եռամսյակի Ծրագիր 1-ի արդյունքային ցուցանիշների կատարողականը կազմում են միջինը՝ 50 %:	«Ընդունված է»	«Ընթացքում է»	2020 թ. -ի առաջին եռամսյակի արդյունքային ցուցանիշների կիսով չափ կատարողականը կապված է կորոնավիրուսի համավարակով պայմանավորված միջազգային ֆեդերացիաների կողմից միջոցառումների դադարեցման հետ:

5	Թվով 4 Ֆեդերացիաներ միջոցառումների տնտեսումից առաջացած 40,074.6 հազար դրամը ձևակերպել են բանկային հաշիվներում, իսկ թվով երկուսը՝ 5,526,7 հազ. դրամը՝ կանխիկ դրամարկղում:	«Ընդունված է»	«Ընթացքում է»	Բանկային մնացորդների և կանխիկ գումարները առկայությունը ֆեդերացիաներում կապված է կորոնավիրուսի համավարակով, հետագայում դրանք ծախսելու կամ ետվերադարձի պայմանով:
6	Առաջարկություն 15. Ձեռնարկել միջոցներ և վերահսկողական գործառույթներ, որոնց կիրառմամբ կապահովվեն «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168 –Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 526-Ն որոշման պայմանների և պահանջների կատարումը: ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից 2020թ.-ի հուլիսի 13-ի թիվ ՀՊԵ ԱԲ 65 գրությամբ հաշվեքննության օբյեկտին՝ Նախարարությանն, է ուղարկվել «ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում 2020 թվականի պետական բյուջեի երեք ամիսների կատարման ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության արձանագրություն»-ը: Նախարարության կողմից ՀՀ հաշվեքննիչ պալատին՝ 2020թ.-ի հուլիսի 23-ի թիվ 01/11.2/18953 – 20 գրությամբ, ներկայացված արձանագրության մեջ դիտարկված անհամապատասխանությունների յուրաքանչյուր կետի մասին պարզաբանումներում «15. Նախարարության «Գնումների գործընթացի վերաբերյալ» տողում ֆիկսվել է «Կներկայացվի լրացուցիչ պարզաբանումներ» խոսույթը: ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020թ.-ի հուլիսի 30-ի թիվ 120 – Ա որոշմամբ հաստատվել է «ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում 2020 թվականի պետական բյուջեի երեք ամիսների կատարման ֆինանսատնտեսական գործունեության հաշվեքննության ընթացիկ եզրակացությունը»-ը: Նույն օրը, Նախարարության 2020թ.-ի հուլիսի 30-ի թիվ 01/31.2/19446 – 20 գրությամբ, ի լրումն նախորդ գրության, ներկայացված են հիշատակված արձանագրության «Գնումների գործընթացի վերաբերյալ» բաժնի ստորև քննարկվող պարզաբանումները:			
6.1	Թվով մեկ մասնաբաժնով «Գնանշման հարցում» ընթացակարգով կատարված գնման ընթացքում կնքված պայմանագրի մասին հայտարարությունը տեղադրվել է 2 աշխատանքային օր ուշացումով:	«Ընդունված է»	«Կտրված է»	Կնքված պայմանագրի մասին հայտարարությունը հրապարակվել է 25.03.2020 թ.ին՝ 23.03.2020թ.-ի փոխարեն, ինչը պայմանավորված է եղել հայտարարված տեղաշարժման խիստ սահմանափակումների և աշխատանքների կազմակերպման նոր պայմանների հետ:

Մեկ անձից կատարված գնումները չեն կատարվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության «2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168 –Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 526-Ն որոշման պայմանների և պահանջների համապատասխան, մասնավորապես, գնման մասնակիցներին չեն ուղարկվել հրավերներ և դրանք չեն հրապարակվել «Procurement.am» տեղեկագրում: Պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունները տեղեկագրում հրապարակվել են ավելի ուշ, քան կնքվել են պայմանագրերը՝ ընդհանուր 206, 033.5 հազ. դրամի չափով:

Արձանագրվածը չի վերաբերում նշված մեկ անձից կատարված գնումներին, որոնք իրականացվել են՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին կամ 4-րդ ենթակետերը, ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168 – Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 526-Ն որոշմամբ սահմանված կարգի 23-րդ կետի 1-ին կետի 1-ին կամ 4-րդ ենթակետերով սահմանված հիմնավորումներով: Վերջիններիս համար հրավեր կարող է հանդիսանալ կամայական ձևով կազմված՝ պայմանագիր կնքելու նպատակով պայմանագրի կողմին ներկայացվող գնման գործընթացի անհրաժեշտ պայմանները (տվյալ դեպքում գրությամբ ներկայացվող պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը), քանի որ չկա վերջիններիս համար գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված և ՀՀ ֆինանսների նախարարի հրամանով հաստատված օրինակելի ձև և Կարգի X բաժնով նախատեսված առանձնահատկություններով պայմանավորված դրանց <<հրավերներ>> չեն հրապարակվում www.procurement.am կայքում:

Ավելին, հրապարակման գործիքում բացակայում է նաև մեկ անձից նշված հիմքերով կատարվող գնումների համար հրավերի հրապարակման բաժինը, հետևաբար նաև մինչ օրս չկա որևէ պատվիրատուի կողմից մեկ անձից նշված հիմքերով գնման համար հրապարակված որևէ հրավեր: Բացի այդ, Կարգի 72-րդ կետով նախատեսվում է, որ եթե գնումը կատարվում է մեկ անձից նշված հիմքերի առկայությամբ և կնքվելիք պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի կեսը (նոր փոփոխմամբ՝ բազային միավորը), ապա գրավոր պայմանագրի կնքումը պարտադիր չէ և գործարքը կարող է կատարվել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթերի (հաշիվ-ապրանքագիր և այլն) հիման վրա, քանի որ մեկ անձից նշված հիմքերով գնման գործընթացներում կան գնման առարկաներ, որոնց համար պայմանագրերը կնքվում են մասնակցի կազմված և առաջարկված օրինակներով (էլեկտրաէներգիա, ջուր, գազ և այլն), հետևաբար նաև իրականում չեն կարող կազմվել և հրապարակվել հրավերներ:

Ինչ վերաբերում է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունների հրապարակմանը, ապա համաձայն Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետի՝ անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է և Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե անգործության ժամկետում չի բողոքարկվում պայմանագիր կնքելու մասին որոշումը, իսկ մինչև անգործության ժամկետը լրանալը կամ առանց պայմանագիր կնքելու մասին հայտարարության հրապարակման կնքված պայմանագիրն առ ոչինչ է: Այսինքն, նշված ժամանակահատվածում չի արգելվում կնքել պայմանագիր, պարզապես այն առոչինչ է մինչև անգործության ժամկետի ավարտը: Իսկ Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ անգործության ժամկետը կիրառելի չէ (զրո օր է), եթե գնման գործընթացին հայտ է ներկայացրել միայն մեկ մասնակից, որի հետ կնքվում է պայմանագիր և այս դրույթը կիրառելի է նաև մեկ անձից նշված հիմքերով գնման դեպքում, քանի որ պատասխանատու ստորաբաժանումը հայտը ներկայացնելիս նշում է այն միակ մասնակցին, որին պետք է ներկայացվի պայմանագիր կնքելու առաջարկ: Ուստի, մեկ

7	2020 թվականի առաջին եռամսյակի ԾՐԱԳՐԵՐ-ի փաստացի ծախսերը գերազանցում են դրամարկղային ծախսերին, տարբեր թվով դեբիտորների և կրեդիտորների հետ հաշվարկներում առկա են պարտքեր, որոնց հանրագումարային բացարձակ շեղումները հաճախ չեն համընկնում փաստացի և դրամարկղային ծախսերի տարբերությանը:	«Ընդունված է»	«Ընթացքում է»	Դեբիտորական և կրեդիտորական պարտքերը ձևավորվել են եռամսյա ընթացիկ գործունեության արդյունքում, որոնց մարումը և զրոյացումը կիրականացվի մինչև տարեվերջ:
8	2020 թվականի առաջին եռամսյակի ԾՐԱԳՐԵՐ-ի արդյունքային, ոչ ֆինանսական ցուցանիշներում ճշտված պլանի նկատմամբ փաստացին 25-30 % նվազում է գրանցել (2613 սովորող):	«Ընդունված է»	«Ընթացքում է»	2020 թ.-ի սեպտեմբեր ամսվա ընթացքում տարեկան միջինը հաշվարկելիս, կճշտվեն և գումարը, և թիվը:
9	2020 թվականի առաջին եռամսյակի Ծրագիր 4 «Թանգարաններ»-ի արդյունքային ցուցանիշներում ճշտված պլանի նկատմամբ փաստացին շուրջ 20 % - ով նվազում է գրանցել	«Ընդունված է»	«Ընթացքում է»	Ճշտված եռամսյակային պլանի համեմատ՝ պահպանվող թանգարանային առարկաների քանակի՝ թվով 19727-ի, սպասարկվող թվով 26 գրքերի, ինչպես նաև թանգարանային թվով 985 առարկաների համալրումը պայմանավորված է փաստացի քանակների ավելացմամբ:
10	Ծրագիր 7-ի ճշտված պլանի և ֆինանսավորման 29.262,1 հազ. դրամի տարբերությունը 2020 թվականի առաջին եռամսյակում դեռևս չկնքված պայմանագրերի արժեքներն են:	«Ընդունված է»	«Ընթացքում է»	29.262,1 հազ. դրամի տնտեսումը պայմանավորված է որոշմիջոցառումների հետձգմամբ և չիրականացմամբ, իսկ որոշ պայմանագրոր պետք է կնքվերին 2020 թ.ի մարտին սակայն արտակարգ դրության պատճառով դեռ չեն կնքված: դրանք տեղափոխվել են երկրորդ եռամսյակ կամ մինչև տարեվերջ:
11	Ծրագիր 8-ի ճշտված պլանի և դրամարկղային ծախսի տարբերությունը կամում է 9,104.2 հազ. դրամ:	«Ընդունված է»	«Ընթացքում է»	Ճշտված պլանի և դրամարկղային ծախսի տարբերությունը՝ 9,104.2 հազ. դրամը պայմանավորված է ԿԳՄՍՆ-ի և «Խորեոգրաֆիայի թատրոն» ՊՈԱԿ-ի միջև կողմից պայմանագիր չկնքելու և ԱԱՀ-ի ետ վերադարձով պայմանավորված հանգամանքերով:

12	2020 թվականի առաջին եռամսյակի Ծրագիր 8-ի փաստացի ծախսը 57.750,7 հազ. դրամով գերազանցում է դրամարկղային ծախսին ձևավորված թվով 3 դեբիտորների և թվով 3 կրեդիտորների հետ հաշվարկների գծով առաջացած պարտքերի ընդհանուր հանրագումարով: ԿԳՄՍՆ –ի 2020թ.-ի առաջին եռամսյակում ընտրված չորս Թատրոնների փաստացի ծախսերը դրամարկղային ծախսերին գերազանցել են 43,693.6 հազ. դրամով և ձևակերպվել որպես կրեդիտորական պարտք:	«Ընդունված է»	«Ընթացքում է»	Դեբիտորական և կրեդիտորական պարտքերը ձևավորվել են եռամսյա ընթացիկ գործունեության արդյունքում, որոնց մարումը և զրոյացումը կիրականացվի մինչև տարեվերջ: Նախարարության և Թատրոնների միջև կնքված պայմանագրերի և դրանց կից հավելվածներով սահմանվել են դինանսավորման չափաքանակները, որոնց նորմատիվից շեղումներով առաջացել են կրեդիտորական պարտքեր:
13	2020 թվականի առաջին եռամսյակի Ծրագիր 8-ի 142 երկայացումներով, հանդիսատեսների թվաքանակի 11533-ով և նոր ներկայացումների 1-ով նվազման պայմաններում դահլիճի միջին ծանրաբեռնվածության ցուցանիշը աճել է 12.3 %-ով:	«Ընդունված է»	«Ընթացքում է»	Ներկայացումների, հանդիսատեսների փաստացի քանակների նվազումը կապված է կորոնավիրուսի վարակով պայմանավորված արտակարգ դրության իրավիճակով և միջոցառումների սահմանափակումներով:
14	2020 թվականի առաջին եռամսյակի Ծրագիր 9-ի փաստացի ծախսը 83.996,6 հազ. դրամով գերազանցում է դրամարկղային ծախսին ձևավորված թվով 3 դեբիտորների և թվով 5 կրեդիտորների հետ հաշվարկների գծով առաջացած պարտքերի ընդհանուր հանրագումարով: ԿԳՄՍՆ –ի 2020թ.-ի առաջին եռամսյակում ընտրված չորս Թատրոնների փաստացի ծախսերը դրամարկղային ծախսերին գերազանցել են 43,693.6 հազ. դրամով, և ձևակերպվել որպես կրեդիտորական պարտք:	«Ընդունված է»	«Ընթացքում է»	Դեբիտորական և կրեդիտորական պարտքերը ձևավորվել են եռամսյա ընթացիկ գործունեության արդյունքում, որոնց մարումը և զրոյացումը կիրականացվի մինչև տարեվերջ: Նախարարության և Համույթների միջև կնքված պայմանագրերի և դրանց կից հավելվածներով սահմանվել են դինանսավորման չափաքանակները, որոնց նորմատիվից շեղումներով առաջացել են կրեդիտորական պարտքեր:
15	2020 թվականի առաջին եռամսյակի Ծրագիր 9-ում 58 երկայացումների, հանդիսատեսների թվաքանակի 11739-ի, դահլիճի միջին ծանրաբեռնվածությունը 10%-ի, դպրոցական ֆիլիարմոնիայի գործունեություն Երևանում, մարզերում, համերգ-դասախոսությունների 3-ով նվազումը և կրեդիտորների հետ հաշվարկների գծով առաջացած պարտքերը դիսկային են:	«Ընդունված է»	«Ընթացքում է»	Ներկայացումների, հանդիսատեսների, դահլիճի ծանրաբեռնվածությունը և այլն փաստացի քանակների նվազումը կապված է կորոնավիրուսի վարակով պայմանավորված արտակարգ դրության իրավիճակով և միջոցառումների սահմանափակումներով:

8. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

8.1 Առաջարկվում է Նախարարությանը հսկողություն սահմանել իր ենթակայության օբյեկտների վրա գնման գործընթացների օրինականության պահպանման առումով, մասնավորապես.

8.1.1 Գնման հրավերները, պայմանագիր կնքելու հայտարարությունները, կնքված պայմանագրերի մասին հայտարարությունների ժամկետները, պատասխանատու ստորաբաժանման կողմից կազմվող և հաստատվող գնման հայտերը, ընտրված մասնակցի վերաբերյալ որևէ տեղեկատվությունը, ինչպես նաև՝ գնահատող հանձնաժողովի գործառույթները իրականացնել ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168 –Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 526-Ն որոշման 5-րդ բաժնի 21-րդ կետի 1-ին ենթակետի և 6-րդ բաժնի 30-րդ կետի պահանջներին համապատասխան:

8.1.2 Գնումների տարեկան պլանով սահմանված չափաբաժինների տրոհմամբ պայմանավորված գնումները համապատասխանեցնել ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168 –Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 526-Ն որոշման 4-րդ բաժնի 16-րդ կետի պահանջների հետ:

8.1.3 Կոմիտեի տարեկան գնումների պլանով նախատեսված հեռախոսային ծառայությունների մասով գնումների ընթացակարգերը, ինչպես նաև գնման ընթացքում անգործության ժամկետի հետ կապված գործառույթները համապատասխանեցնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

8.1.4 Գնման նպատակով կատարված գործողությունների և դրանց հիմքերի վերաբերյալ էլեկտրոնային փաստաթղթերը, մասնավորապես՝ մասնակիցներին ուղարկված հրավերները համապատասխանեցնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-ին մասի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168 –Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 526-Ն որոշման 7-րդ բաժնի 34-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջների հետ:

8. 2 Առաջարկվում է Նախարարությանը վերահսկել ավագ դպրոցների տարեկան ֆինանսավորման հաշվարկների վրա, ընդ համապատասխանեցնել ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 31-ի «ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի թիվ 1262-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 1503-Ն որոշմամբ սահմանված բանաձևի, գործակիցների, իրավակարգավորումների և կանոնակարգերի կիրառման հետ:

8.3 Առաջարկվում է Նախարարությանը՝ ներքին վերահսկողության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, միջոցառումներ ձեռնարկել ստեղծելու համար Նախարարության Ծրագիր 1-ի, Ծրագիր 2-ի, Ծրագիր 4-ի, Ծրագիր 6-ի և Ծրագիր 10-ի շահառուների անհատական տվյալների առանձնացված բազաներ՝ ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից առաջարկվող ֆորմատներով:

8.4 Ընթացիկ եզրակացությունում ներկայացված վերոնշյալ առաջարկությունների հիման վրա մշակել և հաստատել միջոցառումների ծրագիր, որը կպարունակի յուրաքանչյուր միջոցառման համար պատասխանատու ստորաբաժանումները և միջոցառման կատարման ժամանակացույցը:

9. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ ԵՎ ԱՅԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հավելված 1

ՀԱՇՎԱՐԿ

Ծրագիր 5-ի թվով 24 ավագ դպրոցների տարեկան ֆինանսավորման

Թիվ	Ավագ դպրոցի անվանումը	Աշակերտների թիվ	Նախարարության կողմից հաշվարկված 2020 թ.-ի տարեկան ֆինանսավորման գումար (հազար դրամ)	ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից 2020 թ.-ի տարեկան հաշվարկված ֆինանսավորման գումար (հազար դրամ)	Տարբերություն (հազար դրամ)	Տեսակարար կշիռ (%)
1	2	3	4	5	6	7
1	«Երևանի Լեոյի անվան թիվ 65 ավագ դպրոց» ՊՈԱԿ	524	116,862.8	91,312.0	25,550.8	21.9
2	«Երևանի Հ. Գալստյանի անվան թիվ 83 ավագ դպրոց» ՊՈԱԿ	366	88,371.9	66,883.5	21,488.4	24.3
3	«Երևանի Խ. Դաշտենցի անվան թիվ 114 ավագ դպրոց» ՊՈԱԿ	447	102,978.0	81,306.7	21,671.3	21.0
4	«Երևանի Ա. Երզնկյանի անվան թիվ 118 ավագ դպրոց» ՊՈԱԿ	347	84,945.8	68,312.9	16,632.9	19.6
5	«Երևանի Բ. Ժամկոչյանի անվան թիվ 119 ավագ դպրոց» ՊՈԱԿ	639	164,274.0	137,599.8	26,674.2	16.2
6	«Երևանի Գ. Գյուլբեկյանի անվան թիվ 190 ավագ դպրոց» ՊՈԱԿ	746	156,894.3	156,894.3	0.0	0.0
7	«Աշտարակի Ն. Սիսակյան անվան թիվ 5 ավագ դպրոց» ՊՈԱԿ	373	89,634.1	89,634.1	0.0	0.0
8	«Վաղարշապատի Մ. Գորկու անվան թիվ 5 ավագ դպրոց» ՊՈԱԿ	343	101,069.4	84,224.5	16,844.9	16.7
9	«Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ	230	76,863.8	62,904.8	13,959.0	18.2
10	«Արթիկի թիվ 3 ավագ դպրոց» ՊՈԱԿ	254	64,562.4	63,026.6	1,535.8	2.4
11	«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» Հիմնադրամ	882	181,418.1	137,829.9	43,588.2	24.0
12	«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» Հիմնադրամ	663	141,927.6	109,373.4	32,554.2	22.9

1	2	3	4	5	6	7
13	«Սևանի Խ. Աբովյանի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ	241	66,238.4	52,691.9	13,546.5	20.5
14	«Վանաձորի Վ. Տերյանի անվան թիվ 5 ավագ դպրոց» ՊՈԱԿ	284	68,436.3	54,781.9	13,654.4	20.0
15	«Վանաձորի Գրիբոյեդովի անվան թիվ 11 ավագ դպրոց» ՊՈԱԿ	430	99,912.5	79,097.8	20,814.7	20.8
16	«Վանաձորի պետական համալսարան» Հիմնադրամ	173	48,420.5	40,358.7	8,061.8	16.6
17	«Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարան» Հիմնադրամ	434	100,633.8	79,617.5	21,016.3	20.9
18	«Հրազդանի թիվ 10 ավագ դպրոց» Հիմնադրամ	344	86,484.8	67,923.0	18,561.8	21.5
19	«Զարենցավանի Մ. Մաշտոցի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ	450	103,519.0	81,696.5	21,822.5	21.1
20	«Աբովյանի Խ. Աբովյանի անվան թիվ 1 ավագ դպրոց» ՊՈԱԿ	354	103,449.6	69,222.4	34,227.2	33.1
21	«Սիսիանի ավագ դպրոց» ՊՈԱԿ	403	95,043.8	75,589.4	19,454.4	20.5
22	«ՀԱՊՀ Գյումրու մասնաճյուղ ավագ դպրոց» ՊՈԱԿ	124	38,785.8	43,082.4	-4,296.6	-11.1
23	«Գյումրու տնտեսագիտական վարժարան» ՊՈԱԿ	395	86,952.7	92,601.2	-5,648.5	-6.5
24	«Եղեգնաձորի ավագ դպրոց» ՊՈԱԿ	199	53,108.9	43,737.1	9,371.8	17.6
Ը ն դ ա մ ե ն ը՝		9645	2,320,788.3	1,929,702.3	391,086.0	16.9

Հավելված 2

Նախարարության Ծրագիր 6-ի ոչ ֆինանսական ցուցանիշներ

Թիվ	Հաստատություններ	Սաների թիվ, մարդ			Խմբերի քանակ	
		Նախադես-ված	Փաս-տացի	Տարբե-րություն	Նախադես-ված	Փաս-տացի
1	2	3	4	5	6	7
1	“Ատլետիկայի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց” ՊՈԱԿ	363	363	0	45	45
2	“Հ. Գասպարյանի անվան շախմատի և շաշկու օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց” ՊՈԱԿ	364	388	24	34	36
3	“Երևանի ծանրամարտի մանկապատանեկան մարզադպրոց” ՊՈԱԿ	393	393	0	56	56
4	“Երևանի հրաձգության մանկապատանեկան մարզադպրոց” ՊՈԱԿ	199	211	12	24	24
5	“Վ. Ենգիբարյանի անվան բռնցքամարտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց” ՊՈԱԿ	362	362	0	36	36
6	“Ն. Մուշեղյանի անվան ըմբշամարտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց” ՊՈԱԿ	597	596	-1	56	56
7	“Թիավարության մարզաձևերի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց” ՊՈԱԿ	304	304	0	37	37
8	“Սամբոյի և ձյուդոյի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց” ՊՈԱԿ	510	510	0	56	56
9	“Հեծանվային սպորտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց” ՊՈԱԿ	240	240	0	26	26
10	“Հ. Շահինյանի անվան ապորտային, գեղարվեստական մարմնամարզության և ակրոբատիկայի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց” ՊՈԱԿ	968	968	0	101	101
11	“Ռ Կարապետյանի անվան մենապայքարային մարզաձևերի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց” ՊՈԱԿ	440	440	0	47	47
12	“Հրազդանի մականախաղի և շախմատի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց” ՊՈԱԿ	208	208	0	19	19
13	“Լ Հարությունյանի անվան Ծաղկաձորի լեռնադահուկային մանկապատանեկան մարզադպրոց” ՊՈԱԿ	103	103	0	16	16
14	“Սևանի ջրային մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց” ՊՈԱԿ	165	165	0	19	19
1	2	3	4	5	6	7

15	“Սպիտակի մանկապատանեկան համալիր մարզադպրոց” ՊՈԱԿ	371	371	0	33	33
16	“Արմավիրի մենապայքարային մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց” ՊՈԱԿ	228	228	0	23	23
17	“Գյումրու մանկապատանեկան համալիր մարզադպրոց” ՊՈԱԿ	697	719	22	72	73
18	“Գյումրու մանկապատանեկան համալիր” ՊՈԱԿ	338	319	-19	40	38
19	“Գյումրու սուսերամարտի մանկապատանեկան մարզադպրոց” ՊՈԱԿ	138	132	-6	16	16
20	“Գյումրու ծանրամարտի մանկապատանեկան մարզադպրոց” ՊՈԱԿ	178	173	-5	23	22
21	“Գյումրու աթլետիկայի օլիմպիական ՄՊՄԴ” ՊՈԱԿ	243	237	-6	33	31
22	“Քաջարանի համալիր մանկապատանեկան մարզադպրոց” ՊՈԱԿ	356	349	-7	32	31
23	“Վանաձորի բռնցքամարտի մանկապատանեկան մարզադպրոց” ՊՈԱԿ	120	138	18	16	14
24	“Երևանի օլիմպիական մանկապատանեկան համալիր մարզադպրոց” ՊՈԱԿ	460	444	-16	41	42
25	“Տիգրան Պետրոսյանի անվան Շախմատի տուն” ՊՈԱԿ	--	--	--	--	--
26	“Մանկապատանեկան հանրապետական կենտրոն” ՊՈԱԿ	753	753	0	20	20
27	“Տեխնիկական ստեղծագործական հանրապետական կենտրոն” ՊՈԱԿ	280	280	0	32	32
28	“Տեխնիկական մոդելավորման հանրապետական կենտրոն” ՊՈԱԿ	92	92	0	10	10
29	“Աշխատանքային ռեզերվներ” ՄՀԿ	1309	1309	0	86	86
30	“Հրաձգության հանրապետական մարզադպրոց” ՊՈԱԿ	123	123	0	16	16
31	“Ընտանիք” մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն” ՊՈԱԿ	1519	1519	0	112	112
32	“Գեղագիտության ազգային կենտրոն” ՊՓԲԸ	1635	1635	0	163	163
33	“Խաղային մարզաձևերի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց” ՊՈԱԿ	989	989	0	51	51
34	“Դիլիջանի արվեստի պետական քոլեջ” ՊՈԱԿ	173	173	0	31	31
35	“Գեղարվեստի դաստիարակության և մշակույթի մանկապատանեկան կենտրոն” ՊՈԱԿ	1280	1280	0	57	57
36	“Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն” ՊՈԱԿ	614	614	0	53	53
Ընդամենը՝		9135	9170	35	929	929